

***Սույն հոդվածը նախապես լուս է տեսել ռուսերենով
«Գոլոս Արմենիի», 9 հոկտեմբերի 2007 թ.***

**«Գոլոս Արմենիի» (հայերեն տարբերակ),
17 հոկտեմբերի 2007 թ., թիվ 30 (55)
<http://www.golos.am/arm/pdf/GAA17102007.pdf>**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ճԵՂՔՎԱԾ Է»,-

**կարծում է քաղաքագիտության դոկտոր, «Արարատ»
ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն Արմեն ԱՅՎԱԶՅԱՆԸ**

- Պրմ Այվազյան, բազմիցս հայտարարել եք, որ մերկայումն Յայաստանում կոռորդինացված տեղեկատվական քաղաքականության չկա, ինչը իդի է պետության համար չափազանց բացասական եւ հեռուն գնացող հետեւանքներով՝ հատկապես արտաքին քաղաքական գերակա խնդիրների (Լեռնային Ղարաբաղի հակամարտության, 1915-23 թթ. Ցեղասպանության միջազգային դատապարտման եւ այլն) լուծման առումով:

- Տեղեկատվական քաղաքականության խնդիրը այսօրվա հարց չէ: Դեռևս 10 տարի առաջ կացությունը բավականին լուրջ էր, եւ այն ժամանակ արդեն զգուշացնում էինք, որ հայկական կառույցները ճիշտ տեղեկատվական քաղաքականություն չեն վարում կամ էլ այդ ոլորտում պարզապես չեն աշխատում: 90-ականների երկրորդ կեսից ակնհայտ դարձավ, որ տեղեկատվական-հոգեբանական պատերազմում Յայաստանն սկսում է տանուլ տալ՝ բացարձակ անգործություն դրսելորելով իրեն անմիջական վնաս հասցնող ամենատարբեր դիվերսիաների նկատմամբ, մասնավորապես Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող հարցերում: Սակայն այսօր իրադրությունն ավելի է վատացել՝ ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով:

Աղրբեջանն ավարտել է պետական կառույցների ստեղծումը տեղեկատվական պատերազմի ոլորտում և դրա բոլոր ճակատներով անցել Յայաստանի դեմ կազմակերպված լայնածավալ հարձակման: Աղրբեջանական այդ հարձակումն ընթանում է թուրքական ծառայությունների ու միջոցների բացահայտ եւ ընդգրկուն աջակցությամբ, ընդունի հովանավորվելով վերջիններիս վաղեմի դաշնակիցների՝ արեւմտյան եւ խրայելյան հատուկ ծառայությունների ու դրանց հետ կապված տարբեր «վերլուծական կենտրոնների» ու «ինստիտուտների» կողմից: Թեև բաքվեցի գերելսները հաճախ են խոշոր վրիպումներ թույլ տալիս, նշանակետից վեր ու վար-

խփում, սակայն նրանց ակտիվ աշխատանքը, ընտրված ուղղության հստակությունն ու դրան անշեղորեն հետեւելն անժխտելի են: Ինչը չի կարելի ասել հայկական կողմի մասին: Տեղեկատվական դիվերսիաների բախվում ենք ամեն օր, իսկ Հայաստանի եւ հայության տեղեկատվական անվտանգության հարցերի լուծմանը կոչված պետական եւ սփյուռքի կառույցները, կներեք, ականջներն են թափահարում՝ կացությունը փոխելու ոչ մի իրական քայլ չձեռնարկելով: Տեղեկատվության բնագավառում Հայկական կողմի հարձակողական գործողությունների մասին վաղուց է արդեն, ինչ խոսք լինել չի կարող: Ինչ վերաբերում է Հայաստանի տեղեկատվական պաշտպանությանը, ապա սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այն ճեղքված է բազմաթիվ ուղղություններով:

- **Ի՞նչ է նշանակում՝ «տեղեկատվական պաշտպանությունը ճեղքված է»:** Ուզում եք ասել, որ կացությունը վերահսկողությունից դո՞ւրս է եկել, եւ մենք արդեն ի վիճակի չե՞նք դիմակայել տեղեկատվական դիվերսիաներին՝ մասնավորապես Ադրբեյջանի եւ Թուրքիայի կողմից:

- Ցավոք, այդպես է... Արտասահմանյան մանուլի էջերում՝ Ադրբեյջանում, Թուրքիայում, Վրաստանում լայն տարածում ստացող հակահայկական հրապարակումները ուղղակի անպատասխան են մնում, երբեմն չեն էլ նկատվում, իսկ պատահում է նաև, որ նույնիսկ պատճենվում են մեր լրատվամիջոցների կողմից: Օրինակ՝ օգոստոսին ժողովրդավարության եւ արդարության գժով Եվրոպահայկական ֆեղերացիայի (ՀՅ Դաշնակցության կառույց.- Զ. Գ.) կայքեցում ամբողջությամբ եւ առանց մեկնաբանությունների վերարտադրվել էր ադրբեյջանական «Թրենդ» լրատվական գործակալության ընդարձակ հաղորդագրությունը՝ Ղազախստանի թերթերից մեկին Ադրբեյջանի նախագահ ի. Ալիեւի տված հարցագրույցի մասին՝ Բաքվի քարոզության ավանդական կանխադրույթներով հանդերձ՝ զավթված 20 % տարածքի եւ այլնի մասին: ԺԱԵՀՖ-ին հասցեագրված օգոստոսի 19-ի նամակում փորձեցի բացատրել ալիեւյան (նաև՝ նրա դիմանկարով ուղեկցվող) կեղծիքի տարածման մեծ վնասն ու անհեթերությունը, բայց ապարդյուն: Դուք այսօր էլ կարող եք հիանալ այդ տեղեկատվությամբ հայկական խոշորագույն լոբբիստական կազմակերպության

կայքեցում՝

հետեւյալ

հասցեով.

www.eafjd.org/spip.php?breve786&lang=en: Ստացվում է, որ կամովին ջուր ենք լցնում հակառակորդի ջրաղացին:

Արդյունավետ պատասխան չեն ստանում Ադրբեյջանի կողմից հայկական պատմանշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի չդադարող դրսեւուրումները: Օրինակներից մեկը Նախիջեւանում հայկական գերեզմանոցի ոչնչացումն էր: Այսօր ողջ աշխարհի աչքի առաջ Բաքվում ոչնչացվում է Նարիմանովյան

գերեզմանոցը: Այդ բարբարոսությանը գոնե ինչ-որ չափով արձագանքեցին ռուսներն ու հրեաները, հայկական կառուցները՝ ոչ մի բառ (էնտուզիաստ անհատներին չհաշված): Թթվիլսիում՝ Հավլաբար հիմավուրց թաղամասում ոչնչացվում է հայկական գերեզմանոցը: Հայկական կողմը դարձյալ որեւէ կերպ չի արձագանքում կամ, եթե արձագանքում է, ապա վրաց իշխանությունների փաստաբանի կեցվածքով, իբր` ինչ կա ո՞ր, մենք ել ենք վերակառուցում Երեւանի կենտրոնը: Խոջալուի ազատագրման եւ «մարդկության հանդեպ հայերի գործած այլ հանցագործությունների» առնչությամբ Աղրբեջանի զրապարտությունները օրըստօրե առավել մեծ թափ են ստանում: Սուտը, պատմական փաստերի խեղաթյուրումը, տեղեկատվական կեղծիքները հետեւում են մեկը մյուսին, իսկ հայկական կողմը լրում է, կարծես ոչինչ ել չի պատահել: Մենք դեռ խոսում ենք զուտ աղրբեջանաթուրքական հակա-հայկական քարոզության մասին:

Բայց քիչ չեն նաև արեւմտյան լրատվամիջոցները, որոնք նույն քաղաքականությունն են վարում՝ առանց որեւէ հակահարված ստանալու: Ահա ամենաթարմ օրինակը՝ անգլիացի ճանաչված լրագրող Ոոքերտ Ֆիսկի «հայտնագործությունները» անգլիալեզու ամենահեղինակավոր թերթերից մեկի՝ բրիտանական The Independent-ի էջերում:

- **Այն նույն Ֆիսկի, որը մինչ այժմ միանգամայն օրյեկտիվ եւ չեղոք ելույթներ էր ունենում Օսմանյան կայսրությունում հայերի Ցեղասպանության խնդրի շուրջ՝ նույն The Independent-ի էջերում:**

- Այն նույն Ֆիսկի, որին հայերի մեծ բարեկամն են համարում... Օգոստոսին նա եկավ Երեւան եւ, տուն վերադառնալով, տպագրեց Երկու հոդված. առաջինում ներկայացնում էր Հայաստանի եւ Երեւանի մասին իր տպավորությունները: Երկրորդը նվիրված էր Ցեղասպանության խնդիրներին: Ինչ վերաբերում է առաջին հոդվածին, ապա այդչափ հարգված եւ անվանի լրագրողի համար այն կարելի է պարզապես անպատշաճ համարել: Ֆիսկն արհանարանքով գրում է «տեղի անտանելի արվեստի», «Հանրապետության հրապարակում թամանյանի կառուցած ֆաշիստական կամարի» և «Օպերայի ստալինիստական շենքի», մեր մեծ ճարտարապետի իրբ բանսարկու լինելու մասին, որը, իբր, զուպարտել է Զարենցին, որից հետո Զարենցին ձերբակալել են, իսկ թամանյանն ինքնասպանություն է գործել՝ նետվելով իր իսկ կառուցած Օպերային թատրոնի տանիքից (իրականուն թամանյանը մահացել է Զարենցի ձերբակալությունից շատ առաջ)... Կարծ ասած՝ անհերեթ ցնդաբանություն: Երկրորդ՝ օգոստոսի 28-ին լույս տեսած, Հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածում Ֆիսկը պատմում է Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ իր այցելության մասին, ի դեպ, դարձյալ բավական անընդունելի եւ

խրատական արտահայտություններով, թեպետ, ինչպեսեւ իր նախորդ հրապարակումներում միանշանակ դատապարտում է Հայոց ցեղասպանությունը եւ Թուրքիայի ու իր դաշնակիցների կողմից դրա հերքման փաստը: Ինչ արժե, օրինակ, Շիծենակաբերոյի մոտ թաղված հայ ազատամարտիկների անհիմն համեմատությունը՝ պաղեստինյան Ղեյր Յասին գյուղի 254 բնակիչների կոտորածի եւ այլ ահաբեկչությունների համար պատասխանատու հրեական «հրգուն» կազմակերպության ահաբեկիչների հետ...

Բայց գլխավորն այն է, որ Ֆիսկն աղճատում է դարաբառյան հակամարտության պատկերը, որի էությունը, ըստ նրա, կայանում է նրանում, որ «հայերը կոտորել են թուրք-աղորբեջանցի գյուղացիներին», Ղարաբառյան պատերազմն էլ իր հայերի յուրահատուկ վրեժն էր՝ դարասկզբին իրենց հանդեպ գործված Ցեղասպանության համար: Եվ, իհարկե, ոչ մի խոսք չկա Սումգայիթում, Բաքվում, Մարաղայում հայերի ջարդերի մասին... Ֆիսկի, մեղմ ասած, օբյեկտիվությունից հեռու տեսակետներն ամբողջությամբ մեջբերելու կարիք չկա: Խնդիրն այն է, որ նրա ենթադրությունները, ըստ մեզանում ամրացած արատավոր սովորութի, հայկական կողմից արձագանք չստացան:

- Մի՞թե ոչ ոք չարձագանքեց:

- Նախ, Եկեք տեսնենք, թե նման պարագայում ով է պարտավոր արձագանքել. Եվրոպայում Հայաստանի դեսպանատունը (մասնավորապես Մեծ Բրիտանիայի), ՀՀ արտգործնախարարությունը (մասնավորապես նրա Եվրոպայի գծով վարչությունը), ԼՂՀ արտգործնախարարությունը (մասնավորապես Եվրոպայում եւ ԱՄՆ-ում նրա ներկայացուցչությունները), ՀՀ տեղեկատվական-վերլուծական պետական ծառայությունները, հայկական ավանդական կուսակցությունները, Սփյուռքի լոքրիստական կազմակերպությունները (Ամերիկայի Հայկական համագումարը, Հայ Դատի գրասենյակները, համեմատաբար վերջերս ստեղծված ժողովրդավարության եւ արդարության գծով վերը նշված Եվրոպական ֆեդերացիան), արեւմտյան հայագետները (ինչպես հայերը, այնպես էլ օտարները)...

- Եվ նրանք բոլորը լո՞ւր էին:

- Բոլորը: Բայց անցնենք առաջ: Որպեսզի ինչ-որ կերպ գործի գցենք այդ կառուցները, համացանցային առաքման միջոցով ԱՄՆ մեր հայրենակիցներին խնդրեցի արձագանքել Ռ. Ֆիսկի հրապարակմանը, ընդգծելով արտասահմանյան մամուլում ղարաբառյան հակամարտության նման «լուսաբանման» վտանգավորությունը, առավել եւս, եթե հաշվի առնենք, որ դրա հեղինակը հայամետ համարվող լրագրող է, այսինքն՝ նրա խոսքն առավել հավաստի կհամարվի, իսկ The Independent-ը կարդում են միլիոնավոր մարդիկ ողջ աշխարհում:

Իմ առաջարկին առաջինն արձագանքեց ամերիկացի հայագետներից մեկը՝ դոկտոր Յովան Սիմոնյանը. նա գրում էր, որ իմ առաջարկությունը բացարձակորեն անընդունելի է, քանզի Ֆիսկը խոշոր դեմք է, հայերի բարեկամ, որին չի կարելի քննադատել, մենք ընդամենը պարտավոր ենք նրան «մեծարել ու մերալներ շնորհել»։ Յ. Սիմոնյանին լիակատար աջակցություն հայտնեց, նույնպես գիտնական, դոկտոր Զո Քեշիշյանը. «Եկեք ուշադիր լինենք մեր թշնամիների ընտրության հարցում», - գրում է Քեշիշյանը ամփոփման մեջ, թեպետ որեւէ մեկը չէր առաջարկում Ֆիսկին թշնամի հայտարարել։ Խոսքը միայն լրագրողի ուշադրությունը իր անթույլատրելի սխալների ու դարաբաղյան հակամարտության վերաբերյալ փաստերը ոչ օբյեկտիվ ներկայացնելու հանգամանքի վրա հրավիրելու մասին էր։ Ֆիսկի երրորդ՝ ամենաբուռն պաշտպանը, «Կռունկ» ինտերնետային թերթի տնօրեն-աղմինիստրատոր Ասպետ Պետրոսյանը, Ֆիսկի աշխատանքը բարձր գնահատելով, ավելի հեռուն գնաց, գրելով, որ անձամբ ինքը՝ Ասպետ Պետրոսյանը, «բրիտանացի լրագրողի տվյալ հրապարակման մեջ ոչ ոչ մի այնպիսի բան չի տեսնում, որի դեմ արժեք բողոքել»։ Դրանից հետո ստիպված էի գրել եւս մեկ նամակ, ավելի ճիշտ՝ կարծ գրախոսական, որուն մանրամասնորեն քննադատեցի Ֆիսկի հոդվածը, ինչպեսև նրա պաշտպանների դիրքորոշումը։

Եվ վերջապես «ճակատը» ճեղքեցինք։ Էլեկտրոնային փոստով ստացվեցին բազմաթիվ նամակներ, որոնք համակարծիք էին Ֆիսկին քննադատելու անհրաժեշտության հետ։ Վերջակետը դրեց բարոնուիկի Քերոլայն Քոքսը, որն անձամբ գրել էր The Independent-ի խմբագրին խստորեն քննադատելով Ֆիսկին։ Իր նամակում լեդի Քոքսը նշել է, որ Ղարաբաղյան պատերազմում հայերը, ի տարբերություն Աղրբեջանի, հանդես չեն եկել որպես ազրեսոր։ Նա Ֆիսկին հիշեցնում է «Օղակ» գործողության մասին եւ նշում, որ ինքն ականատես է եղել, երբ մեկ օրում Ստեփանակերտի վրա ընկել է 400 «Գրադ» հրթիռ։ Դա մի պատերազմ էր, որտեղ հայերը պաշտպանում էին իրենց Հայրենիքը, եւ, եթե Ֆիսկը չի ցանկանում կորցնել իր հեղինակությունը, նա պետք է ճանաչի իր եզրակացությունների անթույլատրելիությունը,- ամփոփել է լեդի Քոքսը։ Ճիշտ է, հետո եղան նաև խոսքը կտուրը գցելու փորձեր, բայց ապարդյուն (այսպես՝ անդրօվկիանոսյան հայտնի «ճանապարհորդ» Ժիրայր Լիպարիտյանը որոշ ուշացումով նետվեց The Independent-ի հրապարակման պաշտպանությանը՝ գրելով, թե իրեն դուր չի գալիս մեր պատասխանի «հավատաքնչական» եղանակը, եւ որ մենք ազգովին պետք է խորանուիս լինենք Ֆիսկի արտաբերած ճշմարտությունների մեջ, բայց արդեն ուշ էր. սփյուռքահայերի մտքի և հոգու համար մղված այդ տեղային նշանակության ճակատամարտում հաղթանակն այլևս ամրորեն կնքված էր)։

- Տարօրինակ է, որ այդքան լուրջ միջադեպը հայկական լրատվամիջոցներում չի լուսաբանվել եւ ընդհանրապես որեւէ արձագանք չի եղել:

- Հայաստանյան հանրությունը, չնչին բացառությամբ, որևէ պատկերացում չուներ, թե համացանցում Ֆիսկի հրապարակումների առնչությամբ ինչպիսի բանավեճ էր բորբաքվել սեպտեմբերի առաջին օրերին: Դա եւս մեկ անգամ վկայում է համահայկական միասնական տեղեկատվական դաշտի, աշխարհով մեկ սփոված հայության մասերի միջեւ արդյունավետ օպերատիվ կապի եւ տեղեկատվական քաղաքականության կողորդինացման բացակայության մասին: Այսօր տեղեկատվական դաշտում լուրջ աշխատանքը նշանակում է աշխատանք մի քանի լեզվով՝ առնվազն հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Մինչ օրս ոչ ՅՅ պետական, ոչ էլ Սփյուռքի կառույցները այդպես էլ չեն արձագանքել այդ հակահայկական հերթական սաղրանքին: Եթե կացությունը խորը վերլուծենք, ապա ակնհայտ կդառնա, որ խոսքը միայն մեկ լրագրողի հակահայկական հոդվածի մասին չէ: Ի՞նչ հետեւություններ կարելի է անել այս պատմությունից: Ի՞նչի՞ է այս ամենը վկայում: Առաջին հերթին այն, որ տեղեկատվական ոլորտում ՅՅ եւ ԼՂՅ պետական կառույցները կաթվածահար վիճակում են: Երկրորդ՝ այն, որ Սփյուռքի կազմակերպությունները Դայկական հարցն ընկալում են հիմնականում մեկ՝ Դայոց ցեղասպանության միջազգային ճանաչման տեսանկյունից, թողնելով առանց լուրջ ուշադրության ու պաշտպանության հայության մյուս կարեւոր խնդիրները՝ Արցախի և Զավախսի ճակատագիրը, ՅՅ եւ ԼՂՅ անվտանգությունը: Մի խոսքով՝ տեղեկատվական դաշտում հայության խոր պաշտպանվածությունն ընդամենը գեղեցիկ առասպել է:

- Զեր կարծիքով իրավիճակը կարելի՞ է փոխել: Չէ՞ որ խոսքը, ի վերջո, Դայաստանի տեղեկատվական անվտանգության, ասել է թե, երկրի ազգային անվտանգության մասին է, էլ չենք խոսում միջազգային հանրության առջև Դայաստանի իմիջի մասին...

Անհատական ջանքերով ու միջոցներով անհնար է գործը մեռյալ կետից շարժելը: Պետության ղեկավարները ցանկություն եւ քաղաքական կամք պետք է ունենան ստեղծված իրականությանը բաց աչքերով նայելու: Իսկ այսօր, կողորդինացված աշխատանքի բացակայության պատճառով, տեղեկատվական պատերազմը տանուլ ենք տալիս...

- Այսինքն՝ կարծում եք, որ Ֆիսկի հոդվածը ոչ թե «սայթաքում էր», այլ հերթական տեղեկատվական հարձակում:

- Հնարավոր է, որ Ֆիսկն ընկել է էժանագին սենսացիայի հետեւից... Բայց մյուս կողմից նման հրապարակումները միանգամայն համընկնում են որոշ ուժերի

քաղաքականությանը, որոնք պատրաստ են ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, սակայն միաժամանակ պատրաստ չեն ճանաչելու Արցախի անկախ գոյության կամ Հայաստանին միանալու իրավունքը: Բայց այդ դեպքում Ցեղասպանության ճանաչումը դառնում է ոչ ավելին, քան ձեւական խաղաքար: Չէ՞ որ Ղարաբաղյան խնդիրը Հայկական հարցի մի մասն է. Ցեղասպանությունը փոխկապակցված է Ղարաբաղյան խնդրի եւ տարածաշրջանի ներկայիս աշխարհառազմավարական իրավիճակի հետ: Ցեղասպանությունը միտված էր հայ բնակչության ոչնչացմանն ու բուն հայկական հողերից տեղահանմանը: Այսինքն՝ Ցեղասպանությունը տարածքային խնդիր ստեղծեց՝ իր հայրենիքի մի բեկորի վրա հայության վերապրելու խնդիր: Այդ խնդիրը մասնակի լուծում ստացավ Արցախի, ներառյալ նախկին ԼՂԻՄ-ին հարակից տարածքի ազատագրմանը, ինչը Հայաստանին պարգևեց տարածքի ռազմավարական խորություն եւ պաշտպանունակ սահմաններ: Եվ եթե որեւէ պետություն անկեղծ է Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցում, ապա նա պետք է կատարի նաև տրամաբանորեն հաջորդ քայլը՝ ճանաչի հայության իրավունքը Արցախի եւ ազատագրած ողջ տարածքի նկատմամբ: Վերջիվերջո սա միայն այդտեղ ապրող հայ ժողովրդի ինքնորոշման խնդիրը չէ, այլ տարածքային խնդիր, որի լուծումից է կախված Հայաստանի բուն գոյությունը:

- **Հիշում եմ՝ մի անգամ հարցազրույցում խոսեցիք տեղեկատվական միասնական կառույցի ստեղծման անհրաժեշտության մասին, որը պատասխանատու կլինի այդ ոլորտի քաղաքականության համար:**

- Հիմա էլ պնդում եմ, որ նման կառույցը մեզ անհրաժեշտ է: Բայց դրա համար առաջին հերթին պահանջվում է հայկական պետության հստակ քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ: Ինչ վերաբերում է տեղեկատվական պատերազմում մեր անընդհատ հետ մնալուն ու պարտություններին, պետք է իմանալ, որ այդ պատերազմն ունի իր օրենքներն ու օրինաչափությունները: Վաղը հակահայկական հրապարակումները, ելույթները, գործողությունները, եթե ոչ ոք դրանք չի վիճարկում, կդառնան (հաճախ արդեն դարձել են) թույլատրելի եւ բոլորի համար ընդունելի: Հայաստանի անվտանգությանը վնաս հասցնող սուտ, կեղծ, սադրիչ կանխադրույթները կակսեն կրկնվել ու մեջբերվել հրապարակումից հրապարակում եւ ծնահոսքն այլեւս չես կանգնեցնի... Բայց մենք նույնիսկ հպանցիկորեն չանդրադառնք մեր ներքին տեղեկատվական անվտանգության խնդիրներին, մինչեւ Հայաստանում Ադրբեջանն ու Թուրքիան ունեն իրենց իինգերորդ զորասյունը...

Զրուցեց՝ Զառա ԳԵՎՈՐԳՅԱՆԸ